ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 ապրիլի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

51
(3260)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ–ԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԸ

ՔՊ ընտրական ցուցակի 34-րդ համար Լեւոն Լեւոնյանը աչքի է ընկնում ոչ միայն իր պաշտոնական առաջխաղացմամբ, այլեւ կուսակցական ակտիվությամբ: Նա «ուրախ ավտոբուսի» ակտիվ անդամներից է եւ ներկա է գրեթե բոլոր քարոզարշավներին՝ ցուցադրելով բարձր ներգրավվածություն կուսակցական գործընթացներում:

Լեւոնյանի կենսագրական տվյալները վկայում են բավական արագ կարիերայի աճի մասին: 2025 թվականի մայիսի 19-ին ՀՀ վարչապետի N422-Ա որոշմամբ նա նշանակվել է Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ: Մինչ այդ՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայացած Երեւանի ավագանու ընտրություններով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով ընտրվել է Երեւանի ավագանու անդամ:

2023-2024 թվականներին աշխատել է ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական, իսկ 2022-2023 թվականներին՝ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի խորհրդական: 2022 թվականի հոկտեմբերի 29-ին ընտրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի անդամ: Նույն թվականին եղել է նաեւ «8033» շտապօգնության ծառայության տնտեսական գծով պատասխանատու: 2021-2022 թվականներին աշխատել է «Այրվածքաբանության ազգային կենտրոն»-ում՝ որպես ներքին ընթացակարգերի պատասխանատու: Ավելի վաղ՝ 2019-2020 թվականներին, զբաղեցրել է խորհրդատուի պաշտոն ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում, իսկ 2020 թվականին համակարգել է նախարարության կողմից ստեղծված շտապօգնության ծառայությունը՝ կապված Արցախից վիրավորների հոսպիտալացման եւ տարհանման գործընթացների հետ: 2019 թվականին էլ եղել է Ազգային Ժողովի պատգամավորի օգնական:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ ֆինանսների նախարարությունը 2026 թվականին մի քանի գնում է իրականացրել, որոնք վերաբերում են ոչ թե ֆինանսական քաղաքականությանը, այլ ինտերիերին: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ այս տարվա ապրիլի 6-ին «Սարգսյան Արման Գառնիկի» ԱՁ-ից գնվել է վարագույր՝ 1,573,000 դրամի, ապրիլի 10-ին «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ-ից՝ եւս 840,000 դրամի վարագույր, մարտի 26-ին «Օհաննա Տիգրանյանի» ԱՁ-ից՝ մոտ 1,400,000 դրամի ծաղկամաններ: Ընդհանուր՝ շուրջ 3.8 մլն դրամ՝ կարճ ժամանակահատվածում: Փաստաթղթերում նշվում է, որ նախարարությունը վերանորոգել եւ «3D դիզայնով» նոր սրահներ է կահավորել: Հարցը, սակայն, ձեւավորման մեջ չէ: Ֆինանսների նախարարությունն այն կառույցն է, որը պետք է օրինակ ծառայի պետական միջոցների խնայող եւ նպատակային օգտագործման հարցում: Այդ ֆոնին վարագույրների եւ ծաղկամանների վրա միլիոնավոր դրամների ծախսը առնվազն հարցեր է առաջացնում՝ որքանով է դա առաջնահերթ եւ համաչափ: Օրինական լինելը միշտ չէ, որ նշանակում է նպատակահարմար լինել: Պետական բյուջեի յուրաքանչյուր դրամ պետք է արդարացվի ոչ թե «դիզայնով», այլ հանրային շահով:

Հայաստանում մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, հատկապես անձնական նամակագրության եւ հաղորդակցության գաղտնիությունը, լուրջ կասկածների տակ է դրվում: Պաշտոնական վիճակագրությունը ուսումնասիրելիս «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ նախաքննական մարմինները տարեցտարի դատարաններ են ներկայացնում արդեն հազարավոր միջնորդություններ՝ նամակագրության եւ հաղորդակցության այլ ձեւերի առգրավում կատարելու թույլտվություն ստանալու համար, եւ դատարանների զգալի մասը դրանք բավարարում է: Սա նշանակում է, որ քաղաքացիների անձնական SMS-ների եւ հաղորդակցության գաղտնիությունը գործնականում բացարձակապես ապահովված չէ: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է պաշտոնական վիճակագրական տվյալները, որոնք վերաբերում են մինչդատական վարույթի շրջանակներում նախաքննական մարմինների՝ դատարաններ ներկայացված միջնորդություններին՝ նամակագրության եւ հաղորդակցության այլ ձեւերի առգրավում իրականացնելու վերաբերյալ:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ռոմանոս Պետրոսյանը դեռեւս մինչեւ ամառ կմնա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության (ՀԷՑ) ժամանակավոր կառավարիչ: Պատճառը կապված է «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դատական հայցի հետ: Մասնավորապես, 2026 թվականի մարտի 11-ին ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ կառավարության դեմ՝ պահանջելով հաստատել, որ մինչեւ 2026 թվականի մայիսի 25-ը իրավունք ունի իր՝ ՀԷՑ-ում ունեցած 70% բաժնեմասը վաճառել կառավարության հետ համաձայնեցված կարգով: Դատարանը մասամբ բավարարել է ընկերության միջնորդությունը՝ ժամանակավորապես ճանաչելով այդ բաժնեմասը համաձայնեցված կարգով օտարելու հնարավորությունը: Միաժամանակ, մինչեւ մայիսի 25-ը կասեցվել է այն եռամսյա ժամկետը, որի ընթացքում պետք է իրականացվեր վաճառքի գործընթացը: Սա նշանակում է, որ մինչեւ նշված ժամկետի ավարտը ՀՀ կառավարությունը չի կարող որեւէ գործողություն իրականացնել ՀԷՑ-ի բաժնեմասի վերաբերյալ:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի ապրիլի 28-ին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԴԱ ԻՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

ArmLur.am-ը «Ժողովրդի հարցերը» հաղորդման շրջանակներում զրուցել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի հետ:

-Դուք մասնագիտությամբ բժիշկ եք, հետո խորացել եք առողջապահության կազմակերպման ոլորտում եւ անակնկալ կերպով նշանակվել աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար: Ինչո՞ւ համաձայնեցիք:

-Ես մասնագիտությամբ առողջապահության կազմակերպիչ եմ, ոչ թե կլինիկական բժիշկ: Իմ գործունեությունը միշտ եղել է կառավարման եւ կազմակերպման ոլորտում՝ 2004 թվականից սկսած: Քաղաքական պաշտոնները պահանջում են կառավարչական փորձ եւ քաղաքական պատասխանատվություն, եւ եթե կա նման առաջարկ ու վստահություն, ես դա բնական եմ համարում: Նախկինում էլ տարբեր պետական պաշտոններ եմ զբաղեցրել՝ նախարար, աշխատակազմի ղեկավար, պատգամավոր:

-Շատերը նախարարությունը ընկալում են որպես «աղքատների նախարարություն»: Ինչպե՞ս եք փորձում փոխել այդ կարծրատիպը:

-Դա շատ տարածված է՝ «սոցապ» ձեւով ընկալումը: Մենք փորձում ենք դա փոխել թե՛ աշխատանքով, թե՛ մոտեցմամբ, եւ նույնիսկ քննարկում ենք նախարարության վերանվանման գաղափարը՝ միջազգային փորձի նման «բարեկեցության նախարարություն» ձեւաչափով: Մեր ծրագրերը միայն աղքատության մասին չեն. կան բնակարանային աջակցություն, ընտանիքների աջակցության ծրագրեր եւ այլն: Սա ավելի լայն բարեկեցության քաղաքականություն է:

-Թոշակները բարձրացվել են 10.000 դրամով, սակայն դժգոհություններ դեռ կան:

-Ես համատարած դժգոհություն չեմ տեսնում: Տեսնում եմ առանձին դժգոհ ձայներ, բայց ընդհանուր պատկերն այլ է: Եթե երեկվա համեմատ այսօր վիճակը ավելի լավ է, դա արդեն առաջընթաց է: Բացի թոշակներից, մենք նաեւ ապահովում ենք աջակցող միջոցներ՝ անվասայլակներ, լսողական սարքեր եւ այլն, որոնք լրացնում են սոցիալական համակարգը:

-Գործազրկության թիվը դեռ բարձր է, իսկ գործատուներն էլ աշխատող չեն գտնում: Ինչո՞վ է դա պայմանավորված:

-Գործազրկությունը վերջին տարիներին նվազել է, իսկ գրանցված աշխատանք փնտրողների թիվը զգալիորեն կրճատվել է:

Միաժամանակ կան խնդիրներ՝

մարդիկ չեն համաձայնվում առաջարկվող աշխատավարձերին,

կան չգրանցված աշխատատեղեր,

կա մասնագիտական անհամապատասխանություն:

Այս ամենը նաեւ համակարգային եւ մշակութային խնդիր է: Մենք փորձում ենք նաեւ ստվերից դուրս բերել աշխատաշուկան:

-Սոցիալական ցանցերում քննադատությունը ազդո՞ւմ է ձեր որոշումների վրա:

-Մեր որոշումները բխում են քաղաքացիների կարիքներից: Քննադատությունը լսում ենք, բայց այն միակ հիմքը չէ որոշումների համար: Եթե խոսքը անձնական կյանքին է վերաբերում, դա այլ հարց է, բայց հանրային քաղաքականությունը կառուցվում է տվյալների եւ կարիքների հիման վրա:

-Հաճախ քննարկվում են Ձեր անձնական ընտրությունները, օրինակ՝ հեծանիվը:

-Եթե ես որոշում եմ հեծանիվ վարել կամ ավելի լավ հեծանիվ գնել, դա իմ անձնական ընտրությունն է: Հանրային պաշտոնյան պետք է լինի օրինապաշտ, բայց դա չի նշանակում հրաժարվել անձնական նախասիրություններից:

-Ինչպե՞ս եք դարձել Նիկոլ Փաշինյանի վստահելի անձանցից մեկը:

-Սա տարօրինակ ձեւակերպում է: Մի թիմի ներսում մարդիկ պետք է վստահեն միմյանց: Մենք նույն կառավարության անդամներն ենք, նույն քաղաքական պատասխանատվությունն ենք կրում եւ նույն երկրի համար ենք աշխատում: Դա բնական վստահության հարաբերություն է:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ

Ապրիլի 21-ին ՆԳ նախարարությունում տեղի է ունեցել Աղետների ռիսկի կառավարման միջգերատեսչական աշխատանքային խմբի արտահերթ նիստը, որը վարում էր խմբի ղեկավար, ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը:

Օրակարգում ինտենսիվ տեղումների հետեւանքով գետերի ելքերի հնարավոր աճի եւ լեռնային շրջաններում ձյան հալոցքով պայմանավորված՝ հնարավոր հեղեղումների ռիսկերի վերաբերյալ հարցերն էին:

Շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի տվյալներով՝ ապրիլի 20-ից 21-ը հանրապետության գետերի մեծ մասում կանխատեսվել է ջրի ելքերի մեծացում, առանձին գետերում՝ զգալի: Վեդի, Ազատ եւ Վայոց ձորի մարզի գետերում հնարավոր են ջրի անբարենպաստ ելքեր: Նշվել է նաեւ, որ ապրիլի 24-ից սկսած սպասվում են ինտենսիվ տեղումներ եւ ջերմաստիճանի բարձրացում, ինչի հետեւանքով ձնհալի ակտիվացումը կարող է առաջացնել գետերի մակարդակի բարձրացում՝ ստեղծելով որոշակի ռիսկեր:

Տեղեկությունը ստանալուց հետո ՆԳ նախարարի հանձնարարությամբ գերատեսչության պատասխանատու ստորաբաժանումները իրականացրել են մի շարք միջոցառումներ՝ կազմակերպվել են իրազեկման աշխատանքներ, նախարարության պատասխանատու ստորաբաժանումները կապ են հաստատել ՀՀ ՏԿԵ, ՇՄ նախարարությունների եւ մարզպետարանների հետ, քննարկել նախապատրաստական աշխատանքները, իսկ մարզերի փրկարարական ստորաբաժանումներն անցել են արտակարգ ռեժիմով ծառայության: Հորս, Ակունք եւ Փամբակ գետերի մակարդակի բարձրացմամբ պայմանավորված՝ արձանագրվել է ջրածածկումների 3 դեպք, որոնք հիմնականում կապված են եղել գետաբերանների հատվածներում ջրաբերուկների եւ աղբի կուտակման հետեւանքով առաջացած խցանումներով:

Քննարկման ընթացքում նշվել է, որ մի շարք հատվածներում խնդիրները պայմանավորված են գետերի հուների մաքրման անհրաժեշտությամբ: Այդ համատեքստում ՆԳ նախարար Արփինե Սարգսյանն ընդգծել է մաքրման եւ կանխարգելիչ ինժեներական աշխատանքների կարեւորությունը:

Քննարկվել է նաեւ Ախուրյանի, Ազատի եւ այլ խոշոր ջրամբարների վիճակը: Հնարավոր ռիսկերի կանխատեսման եւ վերահսկման համատեքստում անդրադարձ է կատարվել ջրամբարների տարողունակության եւ լցվածության ցուցանիշներին:

Որպես հանրային իրազեկման եւ վաղ ազդարարման համակարգի առանցքային օղակ՝ կարեւորվել է ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնի դերը:

Նախարար Սարգսյանը հանձնարարել է ուժեղացնել ռիսկային հատվածների վերահսկողությունը եւ անհրաժեշտության դեպքում արագ արձագանքելու համար ապահովել տեխնիկայի մշտական պատրաստվածությունը:

Հնարավոր զարգացումներին արագ եւ համակարգված արձագանքելու նպատակով՝ նախարարը հանձնարարել է Շրջակա միջավայրի նախարարության եւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության միջեւ կրիտիկական հատվածների վերաբերյալ շարունակել օպերատիվ տվյալների փոխանակումը:

Նիստի ընթացքում ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն, ՆԳ նախարարի տեղակալ Արամ Ղազարյանը ներկայացրել է վերջին օրերին Վայոց ձորի, Կոտայքի եւ Լոռու մարզերի բնակավայրերում գետերի վարարման հետեւանքով արձանագրված իրավիճակը եւ իրականացված օպերատիվ միջոցառումները: Նշվել է, որ փրկարարական ծառայողները, համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իրականացրել են սահմանազատման, հոսքերի կարգավորման եւ կանխարգելիչ աշխատանքներ: Իրավիճակը կառավարելի է, լուրջ վնասներ չեն արձանագրվել:

ՍԱԿԱԳԻՆԸ 40%-ՈՎ ԿՆՎԱԶԻ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր նիստում ընդունել է ՀԷՑ-ի նոր բաժանորդ դառնալու (սպառման էներգահամակարգը բաշխման ցանցին միացնելու) սակագները ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար մինչեւ 40%-ով նվազեցնելու, իսկ էլեկտրաէներգիայի հզորությունների ավելացման կամ նոր հզորությունների միացման վճարները՝ մինչեւ 55%-ով նվազեցնելու որոշումը:

Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է ՀԷՑ ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը:

«Որոշումն ուժի մեջ կմտնի այն հրապարակելու հաջորդ օրը (ենթադրաբար՝ վաղը):

Շնորհակալություն եմ հայտնում թե՛ ՀԾԿՀ-ին եւ թե՛ ՀԷՑ-ի ողջ անձնակազմին այս կարեւորագույն քաղաքացիակենտրոն բարեփոխման համար. շնորհավո՛ր բոլորիս: ՀԷՑ-ն այլեւս ծառայում է մեր ժողովրդին»,- գրել է ՀԷՑ-ի պաշտոնակատարը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ Պետրոսյանը պատրաստվում է ՀԾԿՀ-ին ներկայացնել առաջարկ, ըստ որի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունում կմեկնարկի գործընթաց՝ ուղղված նոր սպառողների՝ բաշխման ցանցին միանալու (նոր բաժանորդ դառնալու) դեպքում վճարների 30-40% նվազեցմանը:

ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ՆԿԱՏՎՈՒՄ

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Իլհամ Ալիեւը հայտարարել է՝ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններում որոշ առաջընթաց է գրանցվել:

Ինչպես հաղորդում է AZƏRTAC գործակալությունը, Ալիեւը ապրիլի 22-ին՝ Լատվիայի նախագահ Էդգարս Ռինկեւիչսի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, նշել է, որ երկու երկրների ներկայացուցիչների փոխադարձ այցերը նպաստում են ավելի նորմալ միջավայրի ձեւավորմանը:

Նրա խոսքով՝ «Սպիտակ տանը համատեղ հայտարարության ստորագրումից հետո» արձանագրվել են մի շարք դրական զարգացումներ: Մասնավորապես, նշվել է, որ արդեն իրականացվում է առեւտուր, եւ հատկապես Ադրբեջանից Հայաստան սկսել է վառելիքի արտահանումը:

Բացի այդ, Ադրբեջանի նախագահը ընդգծել է, որ երկու երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ մեդիայի միջեւ նույնպես տեղի են ունենում փոխադարձ այցելություններ եւ հանդիպումներ, որոնք, ըստ նրա, նպաստում են հարաբերությունների կարգավորմանը:

Ա. Վ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌՈՒԲԻՈՆ ԿՄԻԱՆԱ

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն կրկին կմասնակցի Իսրայելի եւ Լիբանանի միջեւ ապրիլի 23-ին Վաշինգտոնում կայանալիք ուղիղ բանակցություններին, հաղորդում է CNN-ը՝հղում անելով աղբյուրին: Աղբյուրի փոխանցմամբ՝ Ռուբիոյից բացի, բանակցություններին կմասնակցեն նաեւ Լիբանանում եւ Իսրայելում ԱՄՆ դեսպաններ Միշել Իսան եւ Մայք Հաքաբին, ինչպես նաեւ Պետդեպարտամենտի խորհրդական Մայքլ Նիդհեմը:

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն կրկին կմասնակցի Իսրայելի եւ Լիբանանի միջեւ ապրիլի 23-ին Վաշինգտոնում կայանալիք ուղիղ բանակցություններին, հաղորդում է CNN-ը՝հղում անելով աղբյուրին: Աղբյուրի փոխանցմամբ՝ Ռուբիոյից բացի, բանակցություններին կմասնակցեն նաեւ Լիբանանում եւ Իսրայելում ԱՄՆ դեսպաններ Միշել Իսան եւ Մայք Հաքաբին, ինչպես նաեւ Պետդեպարտամենտի խորհրդական Մայքլ Նիդհեմը:

ԳՐԱՎՈՐ ՈՐՈՇՈՒՄ

Հունգարիան պարտավոր կլինի գրավոր որոշում ներկայացնել Ուկրաինային տրամադրվող վարկի վերաբերյալ իր դիրքորոշման վերաբերյալ, հաղորդում է Politico-ն՝ հղում անելով եվրոպացի դիվանագետներին: «Գլխավոր նորությունն այն է, որ գործարքի հաստատումը կպահանջվի գրավոր: Սա նշանակում է, որ պատվիրակությունները պարտավոր կլինեն գրավոր ներկայացնել ցանկացած առարկություն սահմանված ժամկետում: Առարկությունների բացակայությունը նշանակում է հաստատում», - գրում է հրատարակությունը: Դիվանագետները նշել են, որ ընթացակարգը «նպատակ ունի պահանջելու, որ Հունգարիան հստակորեն խախտի լռությունը, եթե վճռականորեն տրամադրի վարկին իր դեմ դիրքորոշումը»: ԵՄ երկրների մշտական ներկայացուցիչները մտադիր են չորեքշաբթի օրը Բրյուսելում կայանալիք հանդիպման ժամանակ հաստատել Ուկրաինային 90 միլիարդ եվրոյի վարկը, որը Հունգարիան որոշ ժամանակ արգելափակում է, ԵՄ բյուջեով ապահովված երաշխիքով: Եվրոպական դիվանագիտության ղեկավար Կայա Կալլասի խոսքով՝ համաձայնագիրը հնարավոր է դարձել Հունգարիայում կայացած խորհրդարանական ընտրություններից հետո, որոնցում հաղթել է Վիկտոր Օրբանի մրցակից Պետեր Մագյարը:

ԿՔՆՆԱՐԿԵՆ

Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ ավելի քան 30 երկրների ռազմական պլանավորողներ չորեքշաբթի օրը Լոնդոնում կհավաքվեն Հորմուզի նեղուցի վերաբացման ծրագրերը քննարկելու համար: «30-ից ավելի երկրների ռազմական պլանավորողներ այսօր (չորեքշաբթի, ապրիլի 22-ին) Մեծ Բրիտանիայում կայանալիք երկօրյա համաժողովում կներկայացնեն Հորմուզի նեղուցի վերաբացման մանրամասն պլանավորումը», - ասվում է պաշտպանության նախարարության հաղորդագրության մեջ, որը հրապարակվել է բրիտանական կառավարության կայքում: Հրատարակության տվյալներով՝ միջոցառումը տեղի կունենա Լոնդոնի հյուսիսում գտնվող մշտական համատեղ շտաբում: Քննարկումները կհիմնվեն անցյալ շաբաթ Փարիզում կայացած 51 երկրների գագաթնաժողովի արդյունքների վրա:

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐ

20 ՄԼՆ ԴՐԱՄ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՑ

ՔՊ անդամները սոցիալական հարթակներում արդեն մի քանի օր է՝ ակտիվորեն գովազդում են Քաղաքացու օրվա միջոցառումները: Հիշեցնենք, որ շաբաթ օրը՝ ապրիլի 25-ին, Հայաստանում կնշվի Քաղաքացու օրը, որի համար իշխանությունները պետական բյուջեից տրամադրել են 20 միլիոն 422 հազար 223 դրամ: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է պատշտոնական բաց աղբյուրներում հրապարակված փաստաթղթերից: Նշենք, որ այս գումարը տրամադրվել է ընդամենը երկու կազմակերպությունների՝ «Ստեփան Կույումջյան Միհրանի» եւ «Վահրամ Թոքմաջյան Վարդանի» անհատ ձեռնարկատերերին:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երկու անհատ ձեռնարկատերերն էլ, որոնց հետ պայմանագիր է կնքել վարչապետի աշխատակազմը, ակտիվորեն մասնակցում են պետգնումներին: Ինչ վերաբերում է Վահրամ Թոքմաջյանին, ապա վերջինս պատմաբան է, որն աշխատել է Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում եւ դասավանդել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի երեխաներին՝ Մարիամին եւ Աշոտին: Նշվում է նաեւ, որ այդ օրը ելույթ է ունենալու Փաշինյանի «Վարչաբենդը»:

«Voice of peace» ինստագրամյան էջը հայտնել է, որ համերգի շրջանակում ելույթ են ունենալու միջազգային եւ հայ հայտնի արտիստներ՝ Willy William, Imany, Outlandish, In-Grid եւ Իվետա Մուկուչյան: Ըստ նույն էջի հրապարակման՝ համերգի կարգախոսն է՝ «Խաղաղության ձայնը» մեգաերաժշտական փառատոն:

ArmLur.am-ը ուսումնասիրել է ԿԳՄՍ նախարարության պաշտոնական հայտարարությունը եւ ներկայացնում է, թե ինչ միջոցառումներ են նախատեսվում Քաղաքացու օրվա շրջանակում:

«Տոների եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապրիլի վերջին շաբաթ օրը նշվում է Քաղաքացու օրը, որը 2026 թվականին կնշվի ապրիլի 25-ին: Այսինքն՝ Քաղաքացու օրը շարժական տոն է: Ըստ նախարարության՝ այս տարի միջոցառումները կանցկացվեն «Մենք ենք մեր պետությունը» խորագրով եւ կընդգրկեն հանրապետության շուրջ 100 բնակավայր:

ArmLur.am-ի ուսումնասիրությամբ՝ միջոցառումները կազմակերպվելու են երեք հիմնական ուղղությամբ՝ կրթություն, երիտասարդություն եւ մշակույթ: Կրթական բաղադրիչի շրջանակում հանրապետության բոլոր դպրոցներում արդեն իսկ իրականացվում են ուսումնական նախագծեր՝ «Մենք ենք մեր պետությունը» թեմայով: Աշակերտները ուսումնասիրում են իրենց համայնքների խնդիրները եւ առաջարկում լուծումներ: Նախագծերը կամփոփվեն ապրիլի 20-ին, իսկ պատրաստված մինչեւ 3 րոպե տեւողությամբ տեսանյութերը Քաղաքացու օրը կիրապարակվեն դպրոցների ֆեյսբուքյան էջերում:

Երիտասարդական ուղղությամբ նախատեսվում են բանախոսություններ՝ նվիրված պետության, քաղաքացիական ինստիտուտների, սոցիալական արդարության եւ իրավական պետության գաղափարներին: ArmLur.am-ը պարզեց, որ քննարկումները կանցկացվեն Երեւանի 12 վարչական շրջաններում եւ մարզերի մի շարք բնակավայրերում՝ ընդհանուր շուրջ 100 համայնքում: Բանախոսները կլինեն պետական պաշտոնյաներ, հանրային գործիչներ, ինչպես նաեւ տարբեր ոլորտներում հաջողություններ գրանցած մասնագետներ:

Մշակութային հատվածում նախատեսված են համերգային միջոցառումներ՝ մասնավորապես Մարալիկ եւ Վարդենիս քաղաքներում:

Այսպիսով, պետական բյուջեից ավելի քան 20 մլն դրամի ծախսով Քաղաքացու օրվա միջոցառումները այս տարի կունենան լայն ընդգրկում՝ կրթական ծրագրերից մինչեւ միջազգային աստղերի մասնակցությամբ համերգներ:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼԵՀԱՍՏԱՆԸ ՉԻ ԲԱՑԱՌԵԼ

Արտասահմանյան պատվիրատուներին, այդ թվում՝ Վարշավային, Patriot հրթիռների մատակարարման ուշացումներ կարող են առաջանալ Իրանի դեմ ԱՄՆ-Իսրայելական գործողության ընթացքում նրանց պաշարների սպառման պատճառով: Այս մասին Radio Zet-ի եթերում հայտարարել է Լեհաստանի պաշտպանության նախարար Վլադիսլավ Կոսինյակ-Կամիշը: «Նման ուշացումներ հնարավոր են: Մենք կապի մեջ ենք ամերիկյան կողմի հետ: Ուշացումները չպետք է շատ լուրջ լինեն, բայց դրանք կարող են ազդել Լեհաստանի վրա», - պատասխանել է Կոսինյակ-Կամիշը ռադիոկայանի հաղորդավարի կայքում տրված հարցին: «Թե ամերիկյան, թե եվրոպական արդյունաբերություններում արտադրական հզորությունների վերականգնումը, ցավոք, տեւում է տարիներ, այլ ոչ թե ամիսներ», - նշել է նախարարը: ԱՄՆ-ն եւ Իսրայելը փետրվարի 28-ին լայնածավալ գործողություն սկսեցին Իրանի դեմ: Ապրիլի 7-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց Իսլամական Հանրապետության հետ երկշաբաթյա փոխադարձ հրադադարի մասին: Ապրիլի 11-ին Իրանը եւ Միացյալ Նահանգները մի քանի փուլով բանակցություններ անցկացրեցին Իսլամաբադում: Իրանի պատվիրակությունը գլխավորում էր խորհրդարանի խոսնակ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը, իսկ ԱՄՆ պատվիրակությունը՝ փոխնախագահ Ջ.Դ. Վենսը: Ինչպես ավելի ուշ հաղորդվեց Թեհրանում եւ Վաշինգտոնում, կողմերը չկարողացան համաձայնության գալ հակամարտության երկարաժամկետ կարգավորման շուրջ՝ մի շարք տարաձայնությունների պատճառով:

ԻՍՐԱՅԵԼԸ ՀԱՐՎԱԾԵԼ Է

Իսրայելական անօդաչու թռչող սարքը հարված է հասցրել Լիբանանի հարավարեւելքում գտնվող Ջաբուրա բնակավայրին, ինչի հետեւանքով մեկ մարդ զոհվել է, երկուսը՝ վիրավորվել: Այս մասին հայտնում է ՌԻԱ Նովոստի-ն՝ հղում անելով լիբանանյան NNA ազգային գործակալությանը: «Արեւածագին Արեւմտյան Բեկայի Ջաբուրայի արվարձաններին թշնամական անօդաչու սարքի հարվածի հետեւանքով մեկ մարդ զոհվել է, երկուսը՝ վիրավորվել», - ասված է հաղորդագրության մեջ: Իսրայելը, համաձայն «Հեզբոլլահ» շարժման վերջին հայտարարության, խախտել է այն ավելի քան 200 անգամ՝ կիրառելով մարտական ավիացիա, անօդաչու սարքեր եւ հրետանի, ինչպես նաեւ ականապատման միջոցով պայթեցնելով տներ լիբանանյան բնակավայրերում: «Հեզբոլլահ»-ը իր հերթին երեքշաբթի հայտարարել է հրադադարի ռեժիմի մեկնարկից ի վեր առաջին մարտական գործողության մասին՝ ի պատասխան իսրայելական խախտումների:

ՉԻ ԴԱԴԱՐԻ ՊԱՅՔԱՐԵԼ

Հնդկաստանի ժողովուրդը միասնական է ահաբեկչության դեմ պայքարում եւ երբեք չի դադարեցնի պայքարը այս պատուհասի դեմ: Այս մասին հայտարարել է վարչապետ Նարենդրա Մոդին Պահալգամի ահաբեկչական հարձակման առաջին տարելիցի կապակցությամբ, որը խլեց 26 մարդու կյանք: «Որպես ազգ՝ մենք միասնական ենք վշտի եւ վճռականության մեջ: Հնդկաստանը երբեք չի խոնարհվի որեւէ տեսակի ահաբեկչության առջեւ: Ահաբեկիչների նենգ մտադրությունները երբեք չեն հաջողվի, զոհերը երբեք չեն մոռացվի», - գրել է Մոդին իր ուղերձում: Պահալգամի ողբերգական իրադարձությունների տարելիցը Հնդկաստանում նշվում է որպես սգո եւ ահաբեկչական սպառնալիքի դեմ պայքարը շարունակելու վճռականության օր: Հիշատակի միջոցառումները տեղի են ունենում Ջամմուի եւ Քաշմիրի հյուսիսային միութենական տարածքում հնարավոր ծայրահեղական հարձակումները կանխելու համար ուժեղացված անվտանգության միջոցառումների ֆոնին, որտեղ մեկ տարի առաջ տեղի է ունեցել հարձակումը: 2025 թվականի ապրիլի 22-ին «Լաշկար-է-Թայբա» (արգելված է Ռուսաստանում) ահաբեկչական խմբավորման եւ դրա դուստր «Դիմադրության ճակատի» զինյալները ահաբեկչական հարձակում իրականացրին Պահալգամի հայտնի զբոսաշրջային քաղաքում, որի հետեւանքով զոհվեցին Հնդկաստանի 25 քաղաքացիներ եւ մեկ նեպալցի, իսկ շատերը վիրավորվեցին: Հնդկաստանի հետախուզական գործակալությունները բացահայտել են ապացույցներ, որոնք կապում են Պակիստանի միջգերատեսչական հետախուզությունը (ISI) հարձակման հետ:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

Հայաստանի դաշտպանության նախկին փոխնախարար Վահրամ Խորխորունու սպանության գործով Ռուսաստանի Դաշնությունում կալանավորել են սպանության գործով անցնող Հրայր Նարիմանյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինս ՌԴ իրավապահներին հայտնել է, որ դաստրաստ է ներկայանալ ՀՀ ուժային կառույցներին: Արդյունքում ՀՀ գլխավոր դատախազությունը ապրիլի 13-ին դիմել է ՌԴ իրավասու մարմիններին՝ Հրայր Նարիմանյանին Հայաստանին արտահանձնելու համար: Դիմեցինք գլխավոր դատախազություն, որտեղից դահանջեցին գրավոր հարցում ուղարկել:

Հիշեցնենք, որ 2025 թվականի հուլիսի 25-ին ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ բացահայտվել է Հայաստանի պաշտպանության նախկին փոխնախարար Վահրամ Խորխորունու սպանությունը: Ըստ նախաքննական մարմնի՝ Սասուն Առուշանյանը, Հրայր Նարիմանյանը եւ Արմեն Առաքելյանը 1998 թվականի դեկտեմբերի 10-ին, շահադիտական դրդումներով, Սասուն Առուշանյանի կազմակերպմամբ եւ համակատարմամբ, իրականացրել են սպանությունը, ինչպես նաեւ ապօրինի կերպով ձեռք են բերել եւ պահել հրազեն: ՔԿ-ի տվյալներով՝ Սասունը, լինելով զինծառայող, կազմակերպել է սպանությունը եւ 1998 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին այդ նպատակով պայմանավորվել է Լեռնային Ղարաբաղի բնակիչներ Հ.Ն.-ի եւ Ա.Ա.-ի հետ՝ նրանց խոստանալով համապատասխանաբար 10 000 եւ 15 000 դոլար:

Սպանությունն իրականացնելու նպատակով ձեռք է բերել «Մակարով» տեսակի ատրճանակի ինքնաշեն փող եւ խլացուցիչ, որոնք տեղադրել է իր ապօրինի պահվող «Մակարով» տեսակի 9 մմ տրամաչափի ատրճանակի վրա: Ատրճանակը փորձարկել է քաղաքից դուրս՝ ստուգելով ձայնի խլացման աստիճանը: Խլացուցիչի արդյունավետությունը բավարար չլինելու պատճառով Նարիմանյանի օգնությամբ քանդել եւ նորից ինքնաշեն եղանակով հավաքել է փամփուշտները՝ նվազեցնելու վառոդային լիցքը:

1998 թվականի դեկտեմբերի 7-ին վերոնշյալ անձինք եկել են Երեւան՝ իրենց հետ բերելով հանցագործության գործիք հանդիսացող հրազենը: Սասուն Առուշանյանը հանցակիցներին ցույց է տվել շենքը, որտեղ բնակվել է Վահրամ Խորխորունին: Դեկտեմբերի 9-ի երեկոյան նրանք հանդիպել են Հանրապետության հրապարակում եւ Հ.Ն.-ի վարած մեքենայով գնացել Խորխորունու բնակության վայր, որտեղ դարանակալել են:

Ըստ նախնական դերաբաշխման՝ Հ.Ն.-ն մնացել է մեքենայում, իսկ Ս.Ա.-ն եւ Ա.Ա.-ն՝ շենքի մուտքի մոտ: Դեկտեմբերի 10-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, երբ Խորխորունին մտել է շենքի մուտք, Ս.Ա.-ն եւ Ա.Ա.-ն, փոխլրացնելով միմյանց, արձակել են հինգ կրակոց՝ երեքը դեմքի, երկուսը՝ ձախից կրծքավանդակի թիկնային մակերեսի շրջանում: Վահրամ Խորխորունին մահացել է տեղում:

Եւ ահա Սասուն Սուրենի Առուշանյանի մասով գործը դատարան է ուղարկվել, եւ այն մակագրվել է դատավոր Գեւորգ Պողոսյանին: Սասուն Առուշանյանը այս պահին կալանավորված է:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ գործը դատարան ուղարկվելուց հետո ձերբակալված եւ այնուհետեւ կալանավորված Սասուն Առուշանյանի կալանքը փոխարինվել էր տնային կալանքով, իսկ օրեր առաջ գործը քննող դատավոր Արտակ Կարապետյանը կալանքը վերացրել է եւ վերջինիս նկատմամբ սահմանել վարչական հսկողություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԱՍՏԱՐԱՅՈՒՄ ԿԱՄԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արագածոտնի մարզային կենտրոնի տեսուչների կողմից անհատ ձեռնարկատեր Կարեն Ղազարյանին պատկանող (Արագածոտնի մարզ, գ. Մաստարա, 4-րդ փողոց, 23) հանրային սննդի օբյեկտում իրականացված ստուգման ընթացքում արձանագրվել են սննդամթերքի արտադրության հետ անհամատեղելի սանիտարահիգիենիկ խախտումներ:

Այսպես՝

- սննդի կառույցը նախագծված, կառուցված ու տեղակայված չի եղել այնպես, որ հնարավոր լինի այն մաքրել, ախտահանել, կատարել համապատասխան խնամք, ապահովել աշխատանքային հիգիենիկ պայմաններ,
- հատակը եւ պատերը չեն ունեցել հարթ մակերես եւ չեն պահվել նորոգ վիճակում, իսկ պատերը պատրաստված չեն եղել անջրանցիկ, չներծծող, լվացվող նյութերից,
- սննդամթերք պարունակող տարածքների աշխատանքային մակերեւույթները՝ սեղանները, չեն պահվել նորոգ վիճակում:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, տնտեսավարողին հանձնարարվել է այն համապատասխանեցնել սահմանված նորմերին, ամրագրվել է վերջնաժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Արարատյան փողոցի 36-ամյա բնակիչը ապօրինի թմրանյութ է ձեռք բերում, պահում եւ իրացնում:

Տեղեկությունն իրացնելիս ապրիլի 9-ին՝ ժամը 11:30-ին, մայրաքաղաքի Շիրակի փողոցում իրավապահները կանգնեցրել են նրա վարած մեքենան, ձերբակալել նրան ու ուղեւորին, եւ տեղափոխել Շենգավիթի բաժին:

Վարորդի խուզարկությամբ հայտնաբերվել են բյուրեղանման զանգվածներով երկու փաթեթ ու ծալովի դանակ, իսկ ուղեւորի մոտ՝ ծալովի դանակ եւ մոխրացած հետքերով կաթուցիչ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Նույն օրը, դատարանի որոշմամբ, խուզարկվել է 36-ամյա տղամարդու բնակության վայրը: Մարիխուանայից, կանեփի սերմերից եւ թմրանյութ օգտագործելու համար հարմարեցված առարկաներից բացի հայտնաբերվել են պայթուցիչով նռնակ, ատրճանակ ու ծալովի դանակ:

36-ամյա տղամարդը կալանավորվել եւ տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կիբեռոստիկանությունը զգուշացնում է. «DDoS-ը (Distributed Denial of Service) հարձակման այն տեսակն է, երբ հաքերները փորձում են խափանել կայքի կամ հավելվածի աշխատանքը՝ այն ծանրաբեռնելով հսկայական քանակությամբ կեղծ հարցումներով: Պարզ օրինակ. Պատկերացրեք մի փոքր խանութ, որտեղ միաժամանակ կարող է սպասարկվել 5 հաճախորդ: Հանկարծ խանութ են մտնում 500 հոգի, ովքեր ոչինչ չեն գնում, այլ պարզապես կանգնում են ու աղմկում: Իսկական հաճախորդները չեն կարողանում ներս մտնել, իսկ վաճառողը չի հասցնում սպասարկել: Խանութի աշխատանքը կաթվածահար է լինում: Հանցագործները կոտրում են հազարավոր սովորական սարքեր (համակարգիչներ, սմարթֆոններ, նույնիսկ «խելացի» սառնարաններ) եւ դրանք վերածում «զոմբի-սարքերի» (Botnet): Առանց սեփականատիրոջ գիտության՝ այդ բոլոր սարքերը միաժամանակ սկսում են հարցումներ ուղարկել թիրախավորված կայքին (օրինակ՝ բանկին կամ պետական կառույցին), մինչեւ այն «չի դիմանում» եւ անջատվում է:

Ինչո՞ւ է դա վտանգավոր քաղաքացու համար.

- Ծառայությունների անհասանելիություն. Դուք չեք կարողանում կատարել հրատապ վճարում կամ օգտվել պետական ծառայությունից:
- Ձեր սարքը որպես «զենք». Եթե ձեր համակարգիչը պաշտպանված չէ, հաքերները կարող են այն օգտագործել այլ երկրների կամ կառույցների վրա հարձակվելու համար:

Ինչպե՞ս պաշտպանվել.

- Օգտագործեք հակավիրուսային ծրագրեր. Դրանք թույլ չեն տա, որ ձեր սարքը դառնա «զոմբի-ցանցի» մասնիկ:
- Մի՛ ներբեռնեք անհայտ ծրագրեր. Հենց դրանց միջոցով է ձեր սարքը հայտնվում հաքերների վերահսկողության տակ:
- Եղեք համբերատար. Եթե տեսնում եք, որ պաշտոնական կայքը դանդաղ է աշխատում հարձակման ժամանակ, մի՛ փորձեք վայրկյանը մեկ թարմացնել (Refresh) էջը. դրանով դուք ակամա ավելի եք ծանրաբեռնում համակարգը:

ՀԳ. Նմանատիպ հարձակումները կարող են միտված լինել նաեւ պետության ներսում քաղաքացիների շրջանում անվստահության ու անպաշտպանվածության մթնոլորտ ստեղծելուն»:

ԿԲՌՆԱԳԱՆՁՎԻ

Արարատի մարզի դատախազությունը 2025 թվականի հոկտեմբերի 10-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Արտաշատ համայնքի եւ ֆիզիկական անձի՝ պահանջելով անվավեր ճանաչել 2017 թվականի նոյեմբերի 8-ին տեղի ունեցած՝ 1672 քմ մակերեսով հողամասի աճուրդն ու կիրառել անվավերության հետեւանքներ: Դատարանը 2026 թվականի ապրիլի 10-ի վճռով բավարարել է Արարատի մարզի դատախազության հայցը: Նկատի ունենալով, որ առկա է հողամասը վերադարձնելու անհնարինություն, որպես պայմանագրի անվավերության հետեւանք՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, հողամասը ձեռք բերած ֆիզիկական անձից հօգուտ Արտաշատ համայնքի կբռնագանձվի 61 միլիոն 665 հազար 800 դրամ:

- *Ապրիլի 20-ից 21-ը հանրապետությունում հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 2-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՏ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Իջեւան քաղաքի պետական հանրակրթական որոշ դպրոցներում դասերի ժամանակ փակում են դպրոցների բոլոր ելքերը՝ դպրոցների աշակերտներին, ուսուցիչներին, այլ աշխատակիցներին թողնելով արտակարգ իրավիճակների վտանգի տակ՝ հրդեհ, երկրաշարժ եւ այլն: Դպրոցի դռները փակելու նպատակն այն է, որպեսզի ուշացած աշակերտները չկարողանան մասնակցել դասերին, դասերի ընթացքում աշակերտները չկարողանան լքել կրթօջախի շենքը: Տավուշի մարզի պետական հանրակրթական դպրոցները, բացառությամբ ավագ դպրոցների եւ վարժարանների, գործում են Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի ու մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ, սակայն մարզպետը միջոցներ չի ձեռնարկում հանրակրթական դպրոցներում անթույլատրելի այդ երեւույթը վերացնելու համար: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում դրամահավաք է արվում: ՄԱԿ-ի ծրագրով սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ցածր դասարանների աշակերտներին անվճար սնունդ է տրվում: Այդ ծրագրի մասնակից, անվճար սնունդ ստացող աշակերտներից ամսական մոտ 1000 դրամ գումար են հավաքում: Դա արվում է անվճար սնունդը դպրոցների ճաշարաններում եփելու համար ձեթ գնելու եւ աշակերտների օգտագործած ամանները լվանալու համար լվացող հեղուկներ գնելու նպատակով: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում աշակերտներից կատարվող դրամահավաքի վերաբերյալ, սակայն մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ Տավուշի դպրոցներում դրամահավաքի փաստեր իրենց հայտնի չեն: Մինչդեռ այդ երեւույթը առկա է Տավուշի մարզի հանրակրթական բազում դպրոցներում:

ՏԱՐԱԾՔ ԵՆ ՏՎԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 25-ին որոշում է ընդունել Տավուշի մարզպետի աշխատակազմին ամրացված, Իջեւան քաղաքի Սահմանադրության 1 հասցեում գտնվող 85,4քմ ընդհանուր մեկերեսով 6 սենյակները հանձնելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին: Մարզպետարան տեղեկատվական հարցում եմ արել՝ ո՞ւմ եք հանձնում այդ անշարժ գույքը, ի՞նչ հիմունքներով, ինչքա՞ն ժամկետով, ի՞նչ պայմաններով, ի՞նչ նպատակով: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նշված տարածքը ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 5-ի թիվ 233-Ա որոշմամբ հանձնվել է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնին»: Այդ տեսչական մարմինն ավելի քան 2 տասնամյակ գործում է Տավուշի մարզպետարանին պատկանող շենքում, մինչեւ հիմա այդ տարածք զբաղեցնելը իրավական որեւէ կարգավորում չի՞ ունեցել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՑԱՌԱՊԵՍ ՀՀ-ՈՒՄ

ՄԻՊ–Ը՝ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Սոցիալական մեդիայում եւ զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է Ռուբեն Վարդանյանի ուղերձը՝ ուղղված ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին: Այս մասին ասված է ՄԻՊ-ի տարածած հայտարարության մեջ:

«Ուղերձի շրջանակներում ներկայացված են մի շարք դիտարկումներ ՄԻՊ հաստատության մանդատի եւ լիազորությունների վերաբերյալ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ ստորեւ:

Նախ, կարեւոր ենք համարում ընդգծել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը գործում է անկախության սկզբունքի հիման վրա, չի հանդիսանում կառավարության մաս, գործում է վերջինից անկախ եւ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովի կողմից հավատարմագրված է անկախության ամենաբարձր՝ A կարգավիճակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նշված կարգավիճակը ենթադրում է, որ վերջինս պետության անունից չի կարող եւ չի վարում բանակցություններ, չի իրականացնում պետության արտաքին քաղաքականությունը, այլ գործում է բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ միջազգային չափանիշներով՝ Մարդու իրավունքների պաշտպանին վերապահված մանդատի շրջանակներում: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները տարածվում են բացառապես Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու իրավունքների ենթադրյալ խախտումները արձանագրելու գործընթացների վրա՝ անկախ իրավունքը կրողի ունեցած քաղաքացիությունից:

Ավելին, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ազատությունից զրկման վայրերում մշտադիտարկման այցեր իրականացնելու իրավասություն եւ այդ այցերի ընթացքում իր բոլոր գործիքները կիրառելու անարգել հնարավորություն ունի բացառապես Հայաստանի Հանրապետությունում:

Միեւնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ խաղաղության գործընթացների շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները կարող են ունենալ առանցքային դերակատարություն՝ խստորեն պահպանելով նշված մարմինների գործունեության համար ամրագրված միջազգային չափանիշները, էթիկական սկզբունքները եւ այդ դերակատարությունն իրականացնելով անկախության, անկողմնակալության, չեզոքության, բազմակողմանիության եւ համագործակցության սկզբունքների հիման վրա:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, լինելով Միավորված ազգերի կազմակերպության կողմից որպես անկախ մարմին հավատարմագրված հաստատություն, ոչ թե ստեղծված իրավիճակում է չափազանց կարեւոր համարում մարդասիրական եւ իրավական բոլոր մեխանիզմների անհապաղ գործարկումը, այլ մշտապես է գործադրել հետկոնֆլիկտային եւ խաղաղության գործընթացներում ունեցած իր գործիքակազմերը, այդ թվում՝ Ադրբեջանում ազատությունից զրկված հայերի իրավունքների ապահովման տեսանկյունից: Այս առնչությամբ հրապարակման ենթակա տեղեկատվությունը ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական հարթակներում:

Միեւնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեությունը կառուցված է նաեւ խորհրդապահության եւ «մի՛ վնասիր» սկզբունքների վրա, ինչը Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պահպանվում է այժմ եւ պահպանվելու է ապագայում՝ բոլոր գործընթացների շրջանակներում:

Տարակուսած ենք ուղերձի տեքստում ներկայացված հետեւյալ մտքից. «Մեր զրույցի ընթացքում Ադրբեջանի օմբուդսմենը նշել է, որ Ձեզ հետ արդեն քննարկել է Բաքու այցելելու հնարավորությունը, եւ ադրբեջանական կողմը պատրաստակամություն է հայտնել նպաստել դրա կազմակերպմանը»: Հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը չի ստացել որեւէ պաշտոնական առաջարկ քննարկվող հարցով համագործակցության վերաբերյալ, ինչպես նաեւ չի ստացել որեւէ հաստատում այն մասին, որ ադրբեջանական կողմը պատրաստակամություն է հայտնել նպաստելու այդ համագործակցությանը:

Միեւնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ կոնկրետ պետության տարածքում իրավունքների պաշտպանության յուրաքանչյուր հարց ընդգրկված է տվյալ պետության օմբուդսմանական / մարդու իրավունքների ազգային հաստատության մանդատի շրջանակներում, հանդիսանում է տվյալ պետության օմբուդսմանի գործառույթը եւ որեւէ կերպ չի կարող պայմանավորված լինել այլ պետության ՄԻՊ հաստատության հետ ունեցած հաղորդակցության հանգամանքով:

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը մշտապես բաց է եղել եւ բաց է գործընկեր ՄԻՊ հաստատությունների հետ ցանկացած համագործակցության եւ հաղորդակցության համար, եթե դա իրականացվում է վերը նշված չափանիշներին խստորեն հետեւելով՝ անկախություն, անկողմնակալություն, չեզոքություն, էթիկական սկզբունքների պահպանում:

Հավելենք նաեւ, որ մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից համակարգերը պահանջում են, որպեսզի ազատազրկման ընթացքում անձանց իրավունքների պաշտպանության նպատակով առկա լինի միջազգայնորեն ճանաչված՝ անկախության սկզբունքի հիման վրա գործող անկախ մոնիթորինգային մեխանիզմ, ինչը սկզբունքային առաջնահերթություն է նաեւ այս համատեքստում:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը վերահաստատում է բազմիցս հրապարակայնորեն բարձրաձայնած իր այն դիրքորոշումը, որ Ադրբեջանում ազատությունից զրկված բոլոր հայերը պետք է անհապաղ ազատ արձակվեն: Սա առանցքային դերակատարություն ունի ինչպես խաղաղության գործընթացի, այնպես էլ ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում առկա՝ մարդու իրավունքներին վերաբերելի արժեքների երաշխավորման տեսանկյունից»:

ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապրիլի 21-ին հայտնի դարձավ, որ Ադրբեջանն ավերել է ու հիմնահատակ քանդել է Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցին:

ArmLur.am-ի հետ զրույցում եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Ներսես քահանա Ասրյանը հայտնում է, որ դեռ շոկի մեջ է:

«Երեկ ամբողջ օրն ուզում էի գրառում անել, բայց դեռ շոկի մեջ եմ, ահավոր անտրամադիր»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Տեր Ներսեսը:



Քահանան նաեւ փոխանցեց, որ կփորձի հրապարակային արտահայտվել:

Նշենք, որ եկեղեցին կանգնեցվել է 2018 թվականին եւ օծվել է 2019 թվականին: Հիշեցնենք նաեւ այն, որ ամենեւին վերջերս ադրբեջանական տելեգրամյան ալիքներով տարածված տեսանյութերից պարզ է դարձել, որ Ադրբեջանը հիմնահատակ քանդել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրում գրանցվել է 14 ավտովթար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆԱՄԱԿ

ԻՆՉ Է ԱՄԵԼ ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆԸ

«Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը ներկայացրել է փաստեր, որոնք, ըստ նրա, վկայում են Ադրբեջանից հնչող ուղիղ եւ քողարկված սպառնալիքների մասին՝ կապված Հայաստանում հնարավոր իշխանափոխության հետ: Նա այս հարցով դիմել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսին՝ շեշտելով՝ Եվրամիությունը, որը հայտարարել է ՀՀ ընտրություններում ռուսական ազդեցությանը հակազդելու պատրաստակամության մասին, պետք է նույն կերպ արձագանքի նաեւ Ադրբեջանից եկող սպառնալիքներին:

«Փաստագրված դեպքերի թվում են հետեւյալները. Ադրբեջանի իշխող կուսակցության մի պատգամավոր հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ զգուշացնելով, որ Հայաստանում ընդդիմության հաղթանակը կարող է դրդել Ադրբեջանին պաշտոնապես տարածքային պահանջներ ներկայացնել Հայաստանի նկատմամբ:

Ադրբեջանի նախագահի վարչակազմի վերահսկողության տակ գտնվող թերթը նշել է, որ Հայաստանում «ռեւանշիստական» կառավարությունը «կառավարելու ոչինչ չի ունենա», իսկ պաշտպանության նախարարության վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցը հայտարարել է, որ «հատկապես կարեւոր է», որպեսզի իշխանությունը Հայաստանում մնա այն ուժերի ձեռքում, որոնք համահունչ են Ադրբեջանի ռազմավարական նպատակներին: Այս հայտարարությունները, միասին վերցված, ներկայացնում են Բաքվում պետական իշխանություն ներկայացնող դերակատարների համակարգված փորձ՝ ահաբեկելու միջոցով ազդել Հայաստանի ընտրությունների արդյունքների վրա»,- նշված է նամակում:

Արման Թաթոյանը կոչ է արել ԵՄ առաքելությանը Հայաստանում, որը ներկայացված է տեսանյութում: *(Գ)*

Հայտարարություն

Կորել է Սոնա Բաբկենի Ջոհրաբյանի (ծնված՝ 21.09.1989թ.)՝ Մխիթար Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանի կողմից 26.06.2010թ.-ին տրված N AD081538 դիպլոմը, 02.07.2011թ.-ին տրված N D-14 ինտերնատուրայի վկայականը եւ դրանց միջուկները:

TEAM

TEAM-Ն ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՀԱՎԱՍՏԱԳՐԻ

22-ը ապրիլի, 2026 թ., Երեւան. Team Telecom Armenia-ում Երկրի օրը նշանավորվում է նոր ձեռքբերմամբ՝ ընկերությունը հաջողությամբ անցել է ISO 14001:2015 բնապահպանական կառավարման համակարգի աուդիտը եւ արժանացել համապատասխան հավաստագրի:



ISO 14001:2015 հավաստագիրը արձանագրում է, որ Team-ում ներդրված բնապահպանական կառավարման համակարգը եւ գործելակերպը համապատասխանում են միջազգային լայնորեն ընդունված չափանիշներին:

Հավաստագիրը նաեւ հաստատում է Team-ի հանձնառությունը՝ նվազեցնելու շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ ընկերության գործունեության արդյունքների չափման, բնապահպանական ռիսկերի բացահայտման եւ շարունակական կատարելագործման նախաձեռնությունների միջոցով:

«Team-ում վստահ ենք՝ իրական առաջնորդությունը սկսվում է պատասխանատվությունից: Մեր նպատակը ոչ միայն նորարար տեխնոլոգիաների զարգացումն է, այլեւ այնպիսի միջավայրի ձեւավորումը, որտեղ յուրաքանչյուր նախագիծ իրականացվում է շրջակա միջավայրի հանդեպ հարգանքով: ISO 14001:2015 հավաստագրումը մեզ համար պարտավորեցնող է՝ վստահությամբ շարունակելու շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մեր ռազմավարությունը՝ ապացուցելով, որ կայուն զարգացումը բիզնեսի հիմքն է»,-ասում է Team Telecom Armenia-ի բնապահպանության եւ սոցիալական հարցերով փորձագետ Արեւիկ Մկրտչյանը:

Team-ը շարունակաբար ներդնում է էներգաարդյունավետ լուծումներ՝ կապի եւ հաղորդակցության էներգապահովման համար օգտագործելով արեւային էներգիա: 2025 թվականին ընկերության արեւային կայանները 2024 թվականի նկատմամբ ավելացրել են իրենց արտադրանքը շուրջ 14%-ով, 2023-ի նկատմամբ՝ 77%-ով:

Team-ի ընդհանուր էներգասպառման մեջ վերականգնվող եւ զրոյական արտանետմամբ էներգիայի մասնաբաժինն արդեն կազմում է 18%՝ յուրաքանչյուր տարի ապահովելով շարունակական աճ:

Team Energy արագ լիցքավորման կայանների ցանցն այժմ Հայաստանի ողջ տարածքում գործարկել է ավելի քան 130 կայան: Ընկերության ավտոպարկը շարունակաբար համալրվում է էլեկտրական մեքենաներով. անձայն շարժիչներով եւ զրոյական արտանետումներով մեքենաների մասնաբաժինն արդեն կազմում է շուրջ 30%:

Team-ի ռազմավարական ծրագրի՝ NGN ցանցի կառուցման արդյունքում պղնձե մալուխները փոխարինվում են օպտիկամանրաթելային ցանցով, ինչը էականորեն նվազեցնում է ածխածնի երկօքսիդի արտանետումները:

2025 թվականին Team-ը շարունակել է նվազեցնել իր ջերմոցային գազերի արտանետումները՝ նպատակ ունենալով մինչեւ 2029 թվականը նվազեցնել արտանետումները 40%-ով՝ ապահովելով շարունակական կայուն զարգացում:

Team-ը պարբերական աշխատանքներ է իրականացնում նաեւ թափոնների կրճատման ուղղությամբ: Էլեկտրոնային թափոնների (e-waste) ստեղծումից խուսափելու համար ընկերությունը վերանորոգում եւ կրկնօգտագործում է կապի ապահովման սարքերը: Այսպիսով, 2025-ին ավելի քան 16 հազար հեռահաղորդակցության էլեկտրոնային սարք չի հայտնվել աղբավայրում, այլ վերանորոգվել, արդիականացվել եւ կրկնօգտագործվել է՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28%-ով:

Նախորդ տարվա համեմատ թղթի վերամշակման ծավալները նույնպես աճել են՝ 2024 թվականին վերամշակման է հանձնվել ավելի քան 6 տոննա թուղթ եւ ստվարաթղթե տուփ, իսկ 2025 թվականին այս թիվը հասել է 8.6 տոննայի: Թղթի թափոններ չկուտակելու համար Team-ի բոլոր մասնաճյուղերում հասանելի է eSIM ծառայությունը, եւ ներդրված է E-pen (էլեկտրոնային գրիչ) տեխնոլոգիան:

Team Telecom Armenia-ն շարունակելու է կայուն զարգացմանն ու բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունքի դրսեւորմանն ուղղված իր ռազմավարությունը՝ ներդնելով նորարար տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են եւ արդյունավետություն, եւ շրջակա միջավայրի պաշտպանություն:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում Երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

«ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ»

ՎՏԲ-Հայաստան Բանկն առձանագրում է փոքր բիզնեսի համար նախատեսված վարկային ծրագրի նկատմամբ պահանջարկի կայուն աճ: Վարկատեսակն ունի ձեւակերպման պարզեցված ընթացակարգ՝ առանց գրավի ապահովման եւ լրացուցիչ ֆինանսական վերլուծության: 2025թ. արդյունքներով՝ դրա մասնաբաժինը տվյալ սեգմենտի ընդհանուր վարկավորման ծավալում հասել է 24%-ի, ինչը վկայում է ձեռնարկատերերի բարձր հետաքրքրության մասին:

«Նոր գործընկեր» վարկային պրոդուկտը հատկապես նպատակահարմար է այն ընկերությունների համար, որոնք արդեն ունեն գործող վարկեր այլ բանկերում. ֆինանսավորումը տրամադրվում է դրական վարկային պատմության հիման վրա: Առանց գրավի եւ լրացուցիչ ֆինանսական վերլուծության՝ ձեւակերպման պարզեցված ընթացակարգը հնարավորություն է տալիս ձեռնարկատերերին կարճ ժամանակում ստանալ անհրաժեշտ միջոցներ եւ արդյունավետ կերպով լուծել բիզնես խնդիրները:

Վարկային միջոցները կարող են ուղղվել ընթացիկ գործունեությանը, գործող պարտավորությունների մարմանը եւ այլ բիզնես նպատակների, ինչն այն դարձնում է փոքր ձեռնարկատիրության համար ունիվերսալ ֆինանսական գործիք:

«2025թ. արդյունքներով՝ այս պրոդուկտի պորտֆելը ցուցաբերում է դրական դինամիկա՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18%-ով: Նման աճ է գրանցվել նաեւ հաճախորդների թվի մասով, ինչը վկայում է հաճախորդների բազայի ընդլայնման եւ շուկայում պրոդուկտի դիրքերի ամրապնդման մասին: Պրոդուկտի մասնաբաժինը փոքր բիզնեսի վարկավորման ընդհանուր ծավալում հասել է 24%-ի, ինչը հաստատում է դրա բարձր պահանջարկը ձեռնարկատերերի շրջանում: Միեւնույն ժամանակ, վարկի միջին գումարը պահպանվում է կայուն մակարդակում՝ արտացոլելով դրա արդյունավետությունը փոքր բիզնեսի առօրյա խնդիրների լուծման գործում»,- մեկնաբանում է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Եվգենի Մոտովիլովը:

Վարկը մեծ պահանջարկ ունի մանրածախ առեւտրի, արտադրության եւ ծառայությունների ոլորտներում գործող ընկերությունների շրջանում: Դա պայմանավորված է բիզնեսի կողմից շրջանառու միջոցների համալրման, ապրանքների ձեռքբերման եւ կայուն գործունեության ապահովման համար արագ ֆինանսավորման անհրաժեշտությամբ:

«Նոր գործընկեր» վարկի առավելագույն գումարը կազմում է մինչեւ 5 մլն ՀՀ դրամ: Վարկը տրամադրվում է առանց գրավի՝ մինչեւ 48 ամիս ժամկետով՝ տարեկան 18% տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույք՝ 19.56%):

Վարկի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում կամ Բանկի ցանկացած մասնաճյուղում:

ՎՏԲ-Հայաստան Բանկը
վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐՁԱԳԱՆՔ

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

28-ամյա ասողային վազորդ եւ մոլորակի ամենաարագ մարդկանցից մեկը՝ Նոա Լայլսը, քննադատության է ենթարկվել այն բանից հետո, երբ հարսնացուի հարսանեկան տեսքի վերաբերյալ նրա տեսանյութը վիրուսային է դարձել արարողությունից ընդամենը մի քանի ռոպե առաջ: Հոլովակն արդեն հավաքել է ավելի քան 1.6 միլիոն դիտում:

Կադրերում Լայլսը առաջին անգամ տեսնում է իր հարսնացուին՝ 28-ամյա թեթեւ ատլետիկայի մարզիկ եւ օլիմպիական մեդալակիր Ջունել Բրոմֆիլդին, Pantora Bridal-ի շքեղ հարսանեկան զգեստով: Ակնկալվող ոգեւորության փոխարեն, մարզիկի արձագանքը բավականին զուսպ էր: «Օ՛, լավ, լավ», - ծիծաղելով ասել է Լայլսը՝ տեսնելով իր հարսնացուին արքայադստեր ոճի զգեստով: «Ես չէի կարծում, որ դու կընտրեիր արքայադստեր զգեստ: Այո, սա լավ է»:

Հենց այս արձագանքն էր, որ առաջացրեց առցանց աղմուկ: Սոցիալական ցանցերի օգտատերերը սկսեցին զանգվածաբար քննադատել մարզիկին.

- «Նա, գոնե, ասա՛ց նրան, որ նա գեղեցիկ է»:
- «Ես ոչ մի գովեստ չլսեցի»:
- «Ես ամբողջ օրը կանհանգստանայի այդ արձագանքից հետո»:
- «Նա ծիծաղեց նրա դեմքին»:
- «Հարսանիքը չեղյալ համարեք»:

Շատերը Լայլսի վարքագիծը անվանել են «կարմիր դրոշ» իրենց հարսանիքի օրը:

Այնուամենայնիվ, Բրոմֆիլդն ինքը պաշտպանել է ամուսնուն: TikTok-ի հետեւորդների համար տեսանյութում նա նշել է, որ Լայլսի արձագանքը հենց այն էր, ինչ իրեն պետք էր այդ պահին:

Ըստ նրա՝ հարսանիքից առաջ լուրջ բարդություններ են առաջացել. իր մի քանի հարազատների, այդ թվում՝ ելույթ ունեցող անձին, մերժվել է ԱՄՆ վիզա: Բրոմֆիլդը խոստովանել է, որ ինքը ծանր հուզական վիճակում է եղել, եւ Լայլսը փորձել է շեղել նրան եւ բարձրացնել տրամադրությունը՝ գովեստներով ճնշելու փոխարեն:

«Նա փորձել է ստիպել ինձ ժպտալ, քանի որ հակառակ դեպքում ես պարզապես կհեռանայի այդ հարսանիքի սթրեսից եւ հիասթափությունից», - ասել է նա: Մարզիկը շեշտել է, որ այդ ժամանակ իր համար արտաքին տեսքը, հագուստը եւ նախապատրաստությունը «կարեւոր չէին», եւ նա երախտագիտությամբ է ընդունել ամուսնու վարքագիծը:

Նա նաեւ հավելել է, որ հարաբերությունները չպետք է փչանան մեկ արձագանքի պատճառով. եթե մեկ միջադեպը կարող է չեղարկել հարսանիքը, դա նշանակում է, որ հարաբերությունները սկզբից ամուր չեն եղել:

ԼՈՒՐԵՐ

«ԿՓՈՐՁԵՄ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՆՎԱՃԵԼ»

Բաթումիում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Գոռ Սահակյանը 2-րդ տարին անընդմեջ արծաթե մեդալակիր է դարձել: Ելույթից հետո ծանրորդը լրագրողների հետ զրույցում ամփոփել է Եվրոպայի առաջնությունը. «Այս առաջնությանը ցանկանում էի լավագույնս հանդես գալ, բայց նորից տարբեր պատճառներով չստացվեց: Մարզումներին լավ էի նախապատրաստվել, բայց բարձրացրած կիլոգրամներս չկարողացա կրկնել: Եթե պոկում վարժության 3-րդ մոտեցումս ստացվեր, լրիվ այլ մրցակցություն կլիներ: Հրմանն էլ այն կիլոգրամները չգրանցեցի, որոնց պատրաստէի, թեեւ ուրախ եմ, որ այս մեդալն ունեմ: Արդեն որերորդ տարին է, ինչ-որ բան խանգարում է ոսկե մեդալ նվաճել: Շնորհակալ եմ իմ մարզիչներին, ընկերներին ու բոլորին, ովքեր այս դժվար ժամանակ իմ կողքին են եղել: ԵԱ-ից հետո նորից այլ քաշային կարգ եմ տեղափոխվելու: Սկզբում Օլիմպիական խաղերին մասնակցելու համար տեղափոխվեցի մինչեւ 73 կգ քաշային կարգ, բայց դրանից այն դարձրին 71, հիմա՝ 75 է լինելու: Կարծում եմ, այն էլ փոփոխության չի ենթարկվի: Կհարմարվեմ ու կսկսեմ պատրաստվել Լոս Անջելեսի Օլիմպիական խաղերին: Կփորձեմ բոլոր սխալներս ուղղել ու լավ հանդես գալ»:

ԱՐԴԵՆ 2 ԱՄԻՍ

Քենդալ Ջենները եւ Ջեյքոբ Էլորդին, կարծես, իրենց հարաբերությունները թաքցրել են ավելի երկար, քան կարծում էին երկրպագուները: Չնայած զույգին նկատել են համբուրվելիս Ջասթին Բիբերի Coachella-ում ելույթից հետո, նրանց սիրավեպը սկսվել է դրանից շատ ավելի վաղ: Daily Mail-ի աղբյուրների համաձայն՝ աստղերը հանդիպում են ավելի քան երկու ամիս՝ փետրվարի սկզբից: Այս ընթացքում նրանք շատ ժամանակ են անցկացրել միասին Լոս Անջելեսում, ինչը նրանց օգնել է մտերմանալ եւ իրենց հարաբերությունները հասցնել հաջորդ մակարդակի: Սակայն ամենահետաքրքիրն այն է, որ մոդելի կրտսեր քույրը՝ Քայլի Ջենները, այս պատմության մեջ խաղացել է «խնամակալի» դերը: Հենց նա էր, ըստ աղբյուրների, որ դրդել է Քենդալին սիրավեպ սկսել Էլորդիի հետ: Քայլին հաճախ էր հանդիպում դերասանին մրցանակաբաշխության ժամանակ, երբ նա առաջադրվել էր «Ֆրանկենշտեյն» ֆիլմի համար, իսկ նրա ընկերը՝ Թիմոթի Շալամեն, առաջադրվել էր «Մարտի Սուպրիմ» ֆիլմի համար: Ըստ ներքին աղբյուրի՝ Քայլին բառացիորեն հորդորել է քրոջը. «Փորձիր, նա քեզ հարմար է»: Ավելին, նա երազում էր զույգերով հանդիպումների մասին, որ ժամանակ անցկացնեն չորսով: Հետաքրքիր է, որ Քենդալն ու Ջեյքոբը ճանաչում էին միմյանց երկար տարիներ, բայց մոդելը վաղուց տատանվում էր որոշել՝ տեղափոխե՞լ իրենց հարաբերությունները ընկերական գոտուց ռոմանտիկի: Ի վերջո, հենց Քայլիի համառությունն էր, որ փոխել է ամեն ինչ: Նրանց առաջին հանդիպումները տեղի են ունեցել Քենդալի տանը՝ Բեւեռլի Հիլզի մոտ, նույն վայրում, որտեղ հաճախ հավաքվում էր ամբողջ խումբը: Եվ, ինչպես նշում են աղբյուրները, Քենդալի եւ Ջեյքոբի միջեւ արագ զարգացել է իսկական քիմիա:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է 10–ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ ապրիլի 29-ին կմեկնարկի Հայ ժամանակակից երաժշտության 10-րդ փառատոնի առաջին համերգաշարը:

Փառատոնի կարեւոր առաքելություններից է հայ կոմպոզիտորական արվեստի հանրահռչակումը, հայ ժամանակակից կոմպոզիտորների խրախուսումը՝ ստեղծելու նոր ստեղծագործություններ:

Փառատոնի շրջանակում տեղի կունենան բազմաժանր համերգներ՝ կամերային-անսամբլային, երգչախմբային, երգեհոնային, նվագախմբային երաժշտության եւ այլն:

Փառատոնը կմեկնարկի «Կամերային երաժշտության պրեմիերաներ» խորագիրը կրող համերգով, որը տեղի կունենա Հայաստանի կոմպոզիտորների միության համերգասրահում: Երեկոյի ընթացքում կհնչեն Արամ Սաթյանի, Արթուր Շահնազարյանի, Սոֆա Միքայելյանի, Նաիրա Դիվանյանի, Դավիթ Բալասանյանի ստեղծագործությունները:

Փառատոնի երկրորդ համերգը տեղի կունենա մայիսի 8-ին Վանաձորում՝ Մ. Թավրիզյանի անվան պետական քոլեջի համերգասրահում: ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, անվանի դիրիժոր Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ ելույթ կունենա Վանաձորի կամերային նվագախումբը: Հաջորդ երկու համերգները նույնպես կկայանան կոմպոզիտորների միության համերգասրահում. մայիսի 29-ին սպասվում է երգեհոնային երաժշտության երեկո, իսկ հունիսի 5-ին կհնչի հայ կոմպոզիտորների՝ երեխաների համար գրված խմբերգային երաժշտությունը՝ «Սարյան» երգչախմբի (գեղ. ղեկավար՝ Գրիգոր Հարությունյան) կատարմամբ:

Փառատոնի առաջին համերգաշարը կեզրափակվի Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կամերային կազմի ելույթով. հունիսի 20-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը նվագախումբը կներկայացնի հայ ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ:

Փառատոնի երկրորդ համերգաշարում հանդես կգան Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբն ու Հայաստանի պետական կամերային երգչախումբը: Համերգներին կընդգրկվեն նաեւ հանրապետության առաջատար մենակատարներ:

Համերգների մուտքն ազատ է:

ԿԲԱՑՎԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Ապրիլի 23-ին՝ ժամը 16:00-ին, Հայաստանի պատմության թանգարանում տեղի կունենա «Դիլդիլյաններ. լուսանկարչական ժառանգություն Սփյուռքից» խորագրով ցուցահանդեսի բացման արարողությունը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցին:

Դեռեւս 19-րդ դարից Դիլդիլյանների մի քանի սերունդների ներկայացուցիչներ



Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում՝ Սեբաստիայում, Մարզվանում, Սամսունում եւ այլուր, զբաղվել են լուսանկարչությամբ: Բռնագաղթից հետո նրանք հաստատվել են Հունաստանում եւ ԱՄՆ-ում, որտեղ եւս շարունակել են իրենց գործունեությունը:

Ցուցահանդեսում կներկայացվեն ապակե նեգատիվներ, գծանկարներ, փաստաթղթեր, նամակներ, ինչպես նաեւ Ցոլակ եւ Արամ Դիլդիլյանների կողմից շուրջ 34 տարիների ընթացքում արված տասնյակ լուսանկարներ եւ ընտանեկան ժառանգության այլ ուշագրավ իրեր: Այս նյութերը հատուկ տեղափոխվել են Հայաստանի պատմության թանգարան եւ կհամադրվեն թանգարանի ցուցանմուշների հետ: Ցուցահանդեսը կազմակերպվել է Հայաստանի պատմության թանգարանի եւ Դիլդիլյան ընտանիքի ժառանգորդ, Հարավային Կոնեկտիկուտ համալսարանի փիլիսոփայության բաժնի պրոֆեսոր Արմեն Մարսուբյանի համագործակցությամբ:

Ցուցահանդեսի մուտքն ազատ է:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում ապրիլի 25-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Առյուծն ու խաղալիքը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ անձնագիրը ստանալ ավելի արագ ժամկետներում:

Անահիտ Ասրյան, 29 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Անձնագիրն ավելի շուտ ստանալու նպատակով վճարումների չափն ու տրամադրման ժամկետներն են՝

1,000+10,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 3 աշխատանքային օր հետո ստանալու համար,

1,000+20,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 1 աշխատանքային օր հետո ստանալու համար:

Փոխանակելու դեպքում՝

1,000+10,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 3-րդ աշխատանքային օրը ստանալու համար,

1,000+20,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 1 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու համար:

Կորցնելու դեպքում՝

1,000+40,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 5-րդ աշխատանքային օրը ստանալու համար,

1,000+50,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 3-րդ աշխատանքային օրը ստանալու համար,

1,000+60,000 ՀՀ դրամ՝ անձնագիրը 1 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու համար:

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այս դեպքում վճարումը հնարավոր է կատարել միայն ՄՔԾ ստորաբաժանումում՝ վճարային տերմինալի միջոցով:

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ իմանալ, որ իմ թղթադրամը համարվում է վճարունակ:

Սահակ Միքայելյան, 62 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Թղթադրամները համարվում են վճարունակ, բայց կարող են փոխանակվել միայն բանկերում, որոնք.

- չեն պահպանել իրենց ամբողջականությունը, բայց թղթադրամի մակերեսի առնվազն 60%-ը հստակ պահպանվել է, եւ պահպանված մասը թույլ է տալիս հաստատել թղթադրամի վավերականությունը,
- կազմված են անվիճելիորեն նույն թղթադրամի ոչ ավելի քան 3 պատռված կտորներից,
- ծածկված են ներկով կամ կորցրել են իրենց գույնը, բայց պատկերները եւ պաշտպանիչ հատկանիշները տեսանելի են եւ թույլ են տալիս հաստատել թղթադրամի վավերականությունը:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ավտովթար Լոռու մարզում. վարորդը «ՎԱԶ 2121»-ով դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ գլխիվայր հայտնվել ձորում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 1 + 5 + 11 + 16
	Կոտայքի լեռներ	+ 2 + 5 +11 + 15
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +14 + 17
	Գեղարքունիք	+ 1 + 4 + 9 + 14
	Լոռի	+ 4 + 7 + 16 + 19
	Տավուշ	+ 4 + 6 +17 + 20
	Արագածոտնի լեռներ	0 + 3 +16 + 15
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 8 +14 + 18

	Արարատ	+ 5 + 8 +18 + 21
	Արմավիր	+ 5 + 8 +19 + 22
	Վայոց ձորի լեռներ	0 + 3 +11 + 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 9 +17 + 21
	Սյունիքի լեռներ	0 + 3 + 9 + 12
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +17 + 20
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +21 + 25
	Երեւան	+ 6 + 8 +19 +21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*